

429

For young & old

Stop - young begin to turn

white

3K23

R-61

U. 1919

b 2001

2010

L-35

ԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

КОММУНИСТИЧЕСКАЯ ПАРТИЯ АРМЕНИИ

No 7

No 7

No. 7

3K23

300 5-61

1309-~~16~~

Ա. ԼԵԿԻ Խ



Ի՞նչ ՊէՏՔ Է ԼԻՆԻ

ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Phi Nu E 50 41.

ԱՆՈՒՆ

Н. Ленин. Как должна называться наша партия

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Հայաստանի Կոմմունիստ. կուսակ, Կենտրոնական Կոմիտեի,

Годы—1919

2219-52

Ի՞նչ Պէտք է Հինհ Մեր ԿՈՒՍՈԿՑՈՒԹԵԱՆ
ԱՆՈՒՆԸ.

Մենք պէտք է կոչւենք ռկօմունիստական
կուսակցութիւնը — ինչպէս անւանում էին
իրենց Մարքսն ու Էնդելը:

Մենք պէտք է կրկնենք, որ մենք մարքսիստ-
ներ ենք և իրեն հիմք վերցնում ենք «Կօմունիս-
տական Մանիֆէստը», որը սոցիալ-դէմօկրատիան
խեղաթիւրել է և ժախել երկու գլխաւոր կէտե-
րում. 1) որ բանտորները հայրենիք չունեն. «հայ-
րենիքի պաշտպանութիւնը» իմպէրիալիստական
պատերազմի ժամանակ դաւաճանութիւն է սոցիա-
լիզմի հանդեպ. 2) մարքսիզմի ուսմովնքը. պետու-
թեան մասին խեղաթիւրւած է 2-րդ ինտերնացիո-
նալի կողմից:

«Սոցիալ-դէմօկրատիա» անունը գիտական օ-
րէն սխալ է (ճիշտ չէ), ինչպէս այդ շատ անգամ
ապացուցել է Մարքսը, ի միջի ալլոց և իր «Գիտա-
կան ժրագրի քննադատութիւնը» ուսումնասիրու-
թեան մէջ 1875 թ. և աւելի մատչելի կերպով
կրկնել է Էնդելը 1894 թ.

Կապիտալիզմից մարդկութիւնն անմիջապէս
պիտի անցնի դէպի սոցիալիզմ, ալինքն՝ երբ ար-
դիւնագործութեան միջոցները կը դառնան ընդհա-
նուրի սեփականութիւն և պիտուքները կը բաշխին
աշխատանքի համեմատ:

Մէր կուստկցութիւնը նայում է աւելի եհ-
ուուն: Սոցիալիզմին անխուսափելիօրէն աստիճանա-
բար կը փոխարինէ հօմունիզմը, որի զրօշակի վրա
գրւած է. «ամենքն ընդունակութիւնների համե-
մատ, ամենքին իրենց պէտքերի չափ»:

Ահա իմ առաջին պատճառաբանութիւնը:

Երկրորդը. զիտականօրէն սխալ է մեր կու-
սակցութեան անունի և երկրորդ մասը. գէմօկրա-
տական՝ պետութեան մի ձեւ է: Այն ինչ մենք,
մարքսիստներ, գէմ ենք ամեն մի պետութեան:

Երկրորդ ինտերնացիոնալի (1889—1914) պա-
րագաւխները՝ Պէխանօվը, Կառցկին, և նրանց
նմանները ալլասեռել ու խեղաթիւրել են մարք-
սիզմը:

Մարքսիզմը տարբերւուծ է անարխիզմից նրա-
նով, որ ընդունում է Պետութեան անհրա-
ժեշտութիւնը սոցիալիզմին անցնելու համար,
բայց (և սրանում էլ մենք տարբերւում ենք Կա-
ռցկուց և ընկ-ից) ոչ թէ այնպիսի պետու-
թեան, ինչպիսին է սովորական պարլամենտական
բարժեա-դէմօկրատական հանրապետութիւնը, այլ
այնպիսի, ինչպիսին են 1871 թ. Փարէիզի կօմու-
նան և 1905 և 1917 թ. Բանտորական Պատգա-
մաւորների Խորհրդները:

Իմ երրորդ պատճառաբանութիւնը. կետներ
ստեղծեց, լեզափոխութիւնը ստեղծեց արդէն գոր-
ծով, թէև թոյլ և գեռ սաղմալին ձեւերով, հէնց
այդ, նոր սպետութիւնը», որը պետութիւն չէ սե-
փական իմաստով:

Այդ որդէն գործնականի խնդիր է, այլ ոչ
թէ զեկավարների թէօրիտ:

Պետութիւնը իր սեփական իմաստով մի հրամանատարութիւն է մասսաների զլիխն, զինւածխմբակների կողմից, որոնք անշատւած են ժողովրդից:

Մեր ժնւող նոր պետութիւնը նոյնպէս պետութիւն է, որովհետև մեզ անհրաժեշտ են զինւած մարդկանց խմբեր, անհրաժեշտ է, խստագոյն կարգ, անհրաժեշտ է բռնութեան միջոցով անօղոքնշել ցարական Գուչիկով բուրժւական հակալեզափոխութեան ամեն մի փորձ:

Բայց մեր, ժնւող, նոր պետութիւնն արդէն պետութիւն չէ իր սեփական իմաստով, որովհետև Ռուսաստանի մի շարք տեղերում զինւած մարդկանց խմբերը ինքը մասսան է, ամբողջ ժողովուրդը, բայց ոչ թէ մի այլ ոք, որը կանգնած լինէր նրա զլիխն, նրանից բաժանւած, արտօնութիւններով օժաւած և գործնականապէս անփոխարինելլի:

Ոչ թէ յետ պէտք է նայել, այլ առաջ, պէտք է օրինակ վերցնել ոչ թէ սովորական տիպի բուրժւական դէմօկրատիալից, որը հին, սի ապետական կառավարչական մարմինների, ոստիկանութեան, զօրքի և չինօվնիկների միջոցով ամրապնդում էր բուրժւագիտի տիրապետութիւնը, պէտք է նայել առաջ դէպի ճնւող, նոր դէմօկրատիան, որը դադարում է դէմօկրատիա լինելուց, որ դէմօկրատիան ինքը ժողովրդի տիրապետութիւնն է, իսկ ինքը զինւած ժողովուրդն իր վրա իշխել չի կարող:

Դէմօկրատիա բռոք ոչ միայն զիտականօրէն անթիշտ է, երբ նա գործ է ածւում Կօմունիստական կուսակցութեան վերաբերմամբ: Նա այժմ 1917

թ. մարտից յետով մի վարագոյք է, որը հազցւում է լեզափոխական ժաղովրդի աչքերին և խանդարում է նրան ազատ, համարձակ, ինքնակամ կառւցանել նորը՝ թանորական, Գիւղացիական և ուրիշ պատգամաւորների Խորհրդներ, իբրև միակ իշխանութիւն «պետութեան մէջ և իբրև ամեն մի պետութեան անխուսափելի «մահւան» կարապետը»:

Իմ չորրորդ, պատճառաբանութիւնը պէտք է հաշվի առնէ սօցիալիզմի գոյութեան առարկալական համաշխարհակին պայմանները: Այդ պայմաններն այն չեն, ինչ 1871—1915 թ.թ., երբ Մարքսը և Էնգելսը զիտակցօրէն հաշտուում էին «սօցիալ-դէմօկրատիա» սխալ և օպօրտիւնիստական տէրմինի հետ: Արովհետև այն ժամանակ վարդիզեան կօմունալի անկումից յետոյ, պատմութիւնը, իբրև օրւայ հերթական հարց, առաջազրեց՝ խաղաղ կազմակերպչական լուսաւորչական աշխատանք: Ուրիշ աշխատանք չկար: Անարխիստները ոչ միայն տեսականօրէն էին (և մնում են) սխալ իրենց հիմքում, այլ և տնտեսապէս և քաղաքականապէս: Անարխիստները սխալ գնահատեցին մօմէնտը, չհասկանալով համաշխարհային սիտուացիան, որ Անդիայում բանւորը անբարույականացել էր իմպէրիալիստական օգուտներով, որ Փարիզի կօմունան պարտւեց, Գիւղմանիայում յաղթանակեց բուրժւագոյական շարժումը և որ կիսանորտական Ռուսաստանը բնուսատանը քնած էր դարաւոր քնով:

Մարքսը և Էնգելսը, միշտ հաշվի առան մօմէնտը, հասկացան միջազդալին սիտուացան, հասկացան սօցիալիստական յեզափոխութեանը դանդաղ մօտենալու խնդիրը:

Զը նմանւինք այն վայ-մարքսիստներին, որոնց
մասին Մարքսը ասում էր.

«Ես վիշտապ էի ցանում, բայց հունձը՝ տւեց
ինձ լւեր»:

Կապիտալիզմը, որ վերածնւել է իմպերիալիզմի,
իր օբեկտիվ անհրաժեշտութեամբ ստեղծեց իմպե-
րիալիստական պատերազմը:

Պատերազմը հասցրեց ամբողջ մարդկութիւնը
անդունդի եղբին, կուլտուրայի, քաղաքակրթու-
թեան ոչնչացմանը, բարբարոսութեան և միլոնա-
ւոր, անհամար մարդկանց ոչնչացմանը:

Ուրիշ ելք չկա, բայցի պրոլետարական յե-
ղափոխութիւնից:

Եւ այսպիսի մօմէնտում, երբ նա իր առաջին
վախկոտ և անհաստատ բուրժւական քայլերն է ա-
նում, — այդպիսի մօմէնտում «սօցիալ-դէմօկրատա-
կան» պարագլուխների, «սօցիալ-դէմօկրատական»
պարլամէնտարական գործիչների, «սօցիալ-դէմօկրա-
տական» թերթերի մեծամասնութիւնը, հենց այդ-
պէս են կոչում մասսաների վրայ ազդող մարմին-
ները (դա ճշմարտութիւն է, զա փաստ է), դա-
ւաճանեց սօցիալիզմին, ծառնեց սօցիալիզմը և
անցաւ «իր» ազգային բուրժւագիտի կողմքը:

Մասսաներին շշմեցրել հանել են ճանապար-
հից, խաբել են այդ պարագլուխները:

Եւ մենք պէտք է զարկ տանք այդ խարէու-
թեանը, թեթեացնենք նրա յաջողութիւնը, բռնե-
լով այն հին և հնացած անունի փեշերից, որը փթել
է այնպէս, ինչպէս փթեց երկրորդ ինտերնացիո-
նալը:

Թող բանսորներից «շատերը» հասկանան սօ-

ցիալ-դէմօկրատիան ազնիւ կերպով։ Փամանակ է
սովորել տարրերելու սուրեկտիվը օբեկտիվից։ Սու-
բեկտիվ այդ բանուոր սօցիալ-դէմօկրատները պրօլէ-
տարական մասսաների ղեկավարներն են։

Իսկ օբեկտիվ՝ համաշխարային պայմաններն
այնպէս են, որ մեր կուսակցութեան հին անունը
հեշտացնում է մասսաներին մոլորեցնելու գործը,
խոչընդուռ է հանդիսանում շարժւելու առաջ,
որովհետեւ ամեն քայլափոխում, ամեն մի թերթում,
ամեն պարլամէնտական ֆրակցիայի մէջ մասսան
տեսնում է պարագլուխներին, այսինքն մարդ-
կանց, որոնց ձախներն առէլի բարձր են հնչում, գոր-
ծերն աւելի հեռուն երեսում — բոլոր նրանք ոնոյն-
պէս սօցիալ-դէմօկրատներն են, բոլոր նրանք սօ-
ցիալիզմի դաւաճաններ, սօցիալ-շօվինիստների հետ
միութիւն կազմելու կողմնակիցներ են, բոլոր նրանք
«սօցիալ-դէմօկրատիայի» անունից տւած հին մուր-
հակներ են ներկայացնում։ Իսկ պատճառաբանու-
թիւնները, որ անուում են ընդդէմ կօմունիստականի
թէ «կշփաթմէն անարխիստ-կօմունիստների հետ»։

Ինչո՞ւ մենք չենք վախենում, որ մեզ կշփաթեն
սօցիալ-ազգայնականների, սօցիալ-լիբէրալների, բա-
րեկալ-սօցիալիստների հետ, որոնք ամենայսօաշա-
գէմն են և ամենախորամանիր, մասսաներին բուր-
ժւական խարէութեան գործում ֆրանսիստական հան-
րապետութեան բարժւական կուսակցութիւնների
շարքում։ «Մասսաները սովորել են, մասսաները
սիրել են իրանց սօցիալ-դէմօկրատական կուսակ-
ցութիւնը»։ Առա միակ պատճառաբանութիւնը, բայց
այդ պատճառաբանութիւնը շպրտում է մի կողմ և
մարքսիզմի ուսմունքը, և՝ յեղափոխութեան վաղ-

ւան օրւա խնդիրները, և՝ համաշխարհային սօցիալիզմի առարկաբական գրութիւնը, և՝ 2-րդ ինտէրնացիօնալի խայտառակի քայլքայումը և այն, որ վնասներ են հասցնում յեղափոխական գործին պրոլետարիատին շրջապատող բազմաթիւ «նորնպէս ոօցիալ-դէմօկրատները»։ Այդ յետամացութեան պատճառաբանութիւն է, քնածութեան պատճառաբանութիւն։ իսկ մենք ուզում ենք հիմնիվեր վերաշնել աշխարհը։

Մենք ուզում ենք վերջ տալ համաշխարհային իմպէրիալիստական պատերազմին, որի մէջ կլանւած են հարիւր միլիոնաւոր մարդիկ, որի մէջ խճնւած են հարիւր և հարիւր միլիարդ կապիտալների շահերը, որոնք չի կարելի վերջացնել նշմարիտ դէմօկրատական հաշտութեամբ, առանց մարդկութեան պատճութեան ամենամեծ պրոլետարական յեղափոխութեան։

Եւ մենք վախենում ենք մեղանից։ Մենք կախ ենք ընկել «ուվորական», «սիրելի», կեղասա շապ-կից...»

Ժամանակ' է դէն շպրտել կեղասա շապիկը. ժամանակ' է հագնել մաքուր սպիտակեղէն։



2013



